



Centre of Economic Right



Տնտեսական իրավունքի կենտրոն

Սույն ուսումնասիրությունը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Տնտեսական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Արդարադատության ոլորտի բյուջեի մոնիթորինգ և վերլուծություն իրականացում» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Տնտեսական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ)

I. Ընդհանուր ակնարկ

Հայաստանի Հանրապետության կառավարության [2025 թվականի ապրիլի 23-ի թիվ 460-Ա որոշմամբ](#) (այսուհետ՝ Որոշում) հավանություն է տրվել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը (այսուհետ՝ Հաշվետվություն) և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ ազգային ժողովի հաստատմանը:

Հաշվետվության տվյալների համաձայն 2024թ. արձանագրվել է ՀՆԱ-ի 10,127.2 մլրդ դրամ մակարդակ՝ կանխատեսված 10,516.1 մլրդ դրամի դիմաց: Կանխատեսված ցուցանիշի համեմատ ՀՆԱ-ի փաստացի ցուցանիշը պակաս է 388.9 մլրդ դրամով կամ 3.7%-ով: Այդուհանդերձ, դրա մակարդակը գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը 674.1 մլրդ դրամով կամ 7.1%-ով:

[«Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին»](#) օրենքով (այսուհետ՝ Օրենք) ՀՀ պետական բյուջեի տարեկան եկամուտները սահմանվել են շուրջ 2,723.6 մլրդ դրամ, ծախսերը՝ 3,206.5 մլրդ դրամ: Տարվա

ընթացքում պետական բյուջեի ցուցանիշներում Կառավարության լիազորությունների շրջանակներում կատարվել են փոփոխություններ՝ ներառյալ առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները և վերջիններիս արդյունքում ձևավորված եկամուտները: Դրա արդյունքում վերանայվել է պետական բյուջեի եկամուտների ցուցանիշը՝ ընդհանուր առմամբ նվազեցնելով 31.3 մլրդ դրամով (1.1%-ով), և կազմել է 2,692.3 մլրդ դրամ: Դրան համապատասխան պետական բյուջեի ծախսերը նվազեցվել են 57.7 մլրդ դրամով և կազմել են 3,148.8 մլրդ դրամ:

2024թ. պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 2,579.2 մլրդ դրամ՝ ապահովելով Օրենքով հաստատված տարեկան ծրագրի 94.7% կատարողական, իսկ Կառավարության կողմից ճշտված ծրագրի՝ 95.8% կատարողական:

2024թ. պետական բյուջեի փաստացի ծախսերը կազմել են 2,955.3 մլրդ դրամ՝ ապահովելով Օրենքով հաստատված տարեկան ծրագրի 92.2% կատարողական, իսկ Կառավարության կողմից ճշտված ծրագրի՝ 93.9% կատարողական:

Բյուջեի ծախսերի համեմատ եկամուտներն ունեցել են առավել բարձր կատարողական, որի արդյունքում արձանագրվել է պակասուրդի՝ ծրագրվածից ցածր մակարդակ: Ծրագրված 482.9 մլրդ դրամի փոխարեն պակասուրդը կազմել է 376.1 մլրդ դրամ:

II. Արդարադատության ոլորտի բյուջետային հատկացումների ամփոփ տվյալների վերլուծություն

Հայաստանի Հանրապետության Արդարադատության ոլորտում (այսուհետ՝ Ոլորտ) իրականացվող ծախսերը բյուջեում ներկայացվում են արդարադատության և դատական գործունեության ծրագրերով, որոնք համակարգվում են մի կողմից՝ պետական կառավարման գործադիր մարմնի (այսուհետ՝ ՊԿՄ)՝ ի դեմս ՀՀ արդարադատության նախարարության (ԱՆ), և մյուս կողմից՝ սահմանադրական անկախ և ինքնավար 7 մարմինների (այսուհետ՝ ՍԱԻՄ) կողմից, որոնք են ՀՀ սահմանադրական դատարանը (ՍԴ), Բարձրագույն դատական խորհուրդը (ԲԴԽ), ՀՀ դատախազությունը (Դատախազություն), ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն (ՀԿԿ), Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ), ՀՀ քննչական կոմիտեն (ՔԿ) և Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) աշխատակազմը:

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ոլորտին հատկացված բյուջետային միջոցները և մակրոտնտեսական մի շարք ցուցանիշները 2020-2024 թվականներին բնութագրվում են ստորև ներկայացվող աղյուսակ 1-ի տվյալներով:

Աղյուսակ 1.

ՀՀ արդարադատության ոլորտին հատկացված բյուջետային միջոցները և մակրոտնտեսական մի շարք ցուցանիշները 2020-2024 թվականներին

h/h ը/կ	Ցուցանիշներ	Չափի միավոր	2020	2021	2022	2023	2024	Միջին 2020- 2024 թթ
Ա	Բ	Գ	2	3	4	5	6	8
1	Բյուջետային հատկացումներ արդարադատության ոլորտին	մլրդ դրամ	44.7	48.4	57.8	72.4	74.8	59.6
2	Համախառն ներքին արդյունք	մլրդ դրամ	6,181.9	6,991.8	8,501.4	9,453.1	10,127.2	8,251.1
3	Պետական բյուջեի ծախսեր, ընդամենը	մլրդ դրամ	1,894.6	2,004.3	2,242.6	2,547.6	2,955.3	2,328.9
4	Ոլորտին հատկացված բյուջետային միջոցների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ	տոկոս	0,72	0,69	0,68	0,77	0,74	0,72
5	Ոլորտին հատկացված բյուջետային միջոցների տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերի մեջ	տոկոս	2,36	2,41	2,58	2,84	2,53	2,54
6	Ոլորտին հատկացված բյուջետային միջոցները ՀՀ մշտական բնակչության մեկ մարդու հաշվով	դրամ	15,091.2	16,345.0	19,450.1	24,414.5	24,664.6	19,993.1


Աղբյուր՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն, ՀՀ Վիճակագրության պետական կոմիտե

Ոլորտին հատկացված բյուջետային միջոցների տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքի (այսուհետ՝ ՀՆԱ) մեջ կազմել է 0.74 տոկոս, ինչը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 0.03 տոկոսային կետով: Ընդ որում, այդ ցուցանիշը 0.025 տոկոսային կետով գերազանցում է 2020-2023թթ-ի միջին 0.715 տոկոս ցուցանիշը:

Նախորդ տարվա համեմատ, Ոլորտին հատկացված ծրագրերին ուղղված բյուջետային միջոցները ՀՀ 2024 թ. պետական բյուջեի (այսուհետ՝ ՊԲ) ծախսերի մեջ նվազել են 0.31 տոկոսային կետով և կազմում են ՊԲ ծախսերի 2.53 տոկոսը՝ 2020-2023թթ-ի միջին 2.55 տոկոսի պարագայում: Այսինքն, ՊԲ 2024 թ. ծախսերի մեջ Ոլորտին հատկացված բյուջետային միջոցների տեսակարար կշիռը նվազել է 0.02 տոկոսով:

Ոլորտին հատկացված բյուջետային միջոցների տեսակարար կշիռների հարաշարժը մակրոտնտեսական մի շարք ցուցանիշների մեջ 2020-2024 թվականներին բնութագրվում են ստորև ներկայացվող ինֆոգրաֆիկա 1-ի տվյալներով.

Ինֆոգրաֆիկա 1




Աղբյուր՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն, ՀՀ Վիճակագրության պետական կոմիտե

2024 թ. Ոլորտին հատկացված բյուջետային միջոցները ՀՀ մշտական բնակչության մեկ շնչի հաշվով կազմել են 24,664.6 դրամ՝ 2023 թ. 24,414.5 դրամի դիմաց, 250.1 դրամով կամ 1.0 տոկոսային կետով ավելի: Այդ ցուցանիշը 5,839.4 դրամով կամ 31.0 տոկոսային կետով գերազանցում է նույն ցուցանիշի 2020-2023 թթ. միջին մակարդակը՝ 18,825.2 դրամ:

ՀՀ մշտական բնակչության մեկ շնչի հաշվով Ոլորտին հատկացված բյուջետային միջոցների հատկացումը 2020-2024 թվականներին բնութագրվում է ստորև ներկայացվող ինֆոգրաֆիկա 2-ի տվյալներով.

Ինֆոգրաֆիկա 2.

Ոլորտին հատկացված բյուջետային միջոցները ՀՀ մշտական բնակչության մեկ մարդու հաշվով




Չնայած այն հանգամանքին, որ 2020-2023 թվականներին արձանագրվել էին Ոլորտի ֆինանսավորման ծավալների հարաշարժի բարձր տեմպեր՝ միջինում 112.3 տոկոս (մասնավորապես՝ 2023-ին Ոլորտում ընդհանուր առմամբ միջինում 25.3 տոկոսով), այդուհանդերձ 2024 թ. այդ տեմպերը նվազել են, և Ոլորտին բյուջետային հատկացումների աճի տեմպը նախորդ տարվա համեմատ կազմել է 103.3 տոկոս՝ միջինում նվազելով 9 տոկոսային կետով: Ոլորտին հատկացված բյուջետային միջոցների տարեկան հարաշարժը 2021-2024 թվականներին բնութագրվում է հավելված 1-ի տվյալներով, իսկ 2020թ. նկատմամբ՝ հավելված 2-ի տվյալներով:

2024 թ. Ոլորտին հատկացված կապիտալ ծախսերը կազմել են 1,893.2 մլն դրամ՝ տարեկան պլանով հաստատված 1,943.2 մլն դրամի փոխարեն: Կապիտալ ծախսերը կազմել են ոլորտի ընդհանուր ծախսերի 2.53 տոկոսը, որի մեջ 1.13 տոկոսը բաժին է ընկնում ԱՆ, իսկ 1.40 տոկոսը՝ ՍԱԻ մարմիններին: Ընդ որում, այդ ծախսերի 848.8 մլն դրամը կամ 44.83 տոկոսը բաժին է ընկնում ԱՆ-ը, իսկ 1,044.4 մլն դրամը կամ 55.17 տոկոսը՝ ՍԱԻ մարմիններին:

2024 թ. Ոլորտին հատկացված ընդհանուր ծախսերի կառուցվածքն ըստ ընթացիկ և կապիտալ ծախսերի բնութագրվում է Ինֆոգրաֆիկա 3-ի տվյալներով.

Ինֆոգրաֆիկա 3



Շատ կարևոր է նաև հատկացված բյուջետային միջոցների օգտագործման վերլուծությունն ըստ հակակոռուպցիոն պայքարի ուղղությունների.

- կանխարգելում,
- հակազդում,
- կրթություն,
- կառավարում՝ իր բոլոր բաղադրիչներով,
- կարողությունների հզորացում:

Ոլորտին հատկացված բյուջետային միջոցների բաշխվածությունն ըստ վերոհիշյալ ուղղությունների, դրանց կառուցվածքն ու հարաշարժը բնութագրվում են սույն վերլուծությանը կից ներկայացված թիվ 3-5 հավելվածների տվյալներով:

Այդ տվյալների վերլուծությունը թույլ է տալիս մեզ արձանագրելու հետևյալը.

1. 2024թ. Ոլորտին հատկացված 74,8 մլրդ դրամի բյուջետային միջոցներից ամենաշատը արժեքային արտահայտությամբ՝ 40,2 մլրդ դրամ կամ 53,8 տոկոսը, հատկացվել է քրեակատարողական և քննչական

- ծառայություններին, որոնք ըստ էության համապատասխանում են կոռուպցիայի հակազդման բաղադրիչին,
2. հաջորդ ամենամեծ բյուջետային հատկացումը դատական և հանրային պաշտպանության ծառայություններինն է՝ 16,4 մլրդ դրամ կամ Ոլորտին հատկացումների 21,9 տոկոսը,
 3. Կառավարմանը, իրավական իրազեկմանն ու տեղեկատվության ապահովմանը հատկացվել է շուրջ 12,0 մլրդ դրամ, ինչը կազմում է Ոլորտի հատկացումների 16,0 տոկոսը,
 4. կոռուպցիայի կանխարգելմանը հատկացվել է սոսկ 1,2 մլրդ դրամ կամ ոլորտային հատկացումների 1.6 տոկոսը,
 5. կարողությունների հզորացման համար տրամադրվել է 1.7 մլրդ դրամ՝ Ոլորտային հատկացումների 2.3 տոկոսը,
 6. իսկ ահա հակակոռուպցիոն կրթությանը հատկացվել է ընդամենը 684.7 մլն դրամ կամ ոլորտային հատկացումների սոսկ 0.9 տոկոսը:

Զբաղիված են մնացել 2.6 մլրդ դրամի բյուջետային միջոցներ կամ ոլորտային հատկացումների 3.5 տոկոսը, որոնց վերագրումը որևէ ուղղության չի կատարվել:

Ոլորտի բյուջետային ֆինանսավորման ձևավորված միտումներին համահունչ է իրականացվել նաև հակակոռուպցիոն պայքարին ուղղված միջոցների բաշխումը: Միաժամանակ հակակոռուպցիոն պայքարին ուղղված բյուջետային ֆինանսավորման հարաշարժը հուսադրող չէ:

Այդպիսի հարաշարժի պարագայում խիստ մտահոգիչ է դրանց բաշխումը պայքարի ուղղություններով: Այսպես, 2024թ. միջին ոլորտային աճի տեմպի մակարդակից էապես բարձր տեմպերով են աճել կոռուպցիայի հակազդման ուղղության «Դատական և հանրային պաշտպանություն» բաղադրիչի ծախսերը՝ 112.7% և «Քրեակատարողական, քննչական ծառայության» բաղադրիչի ծախսերը՝ 108.5%:

2024թ. միջին ցուցանիշի համեմատությամբ նկատելի բարձր աճի տեմպեր են գրանցվել նաև կոռուպցիայի կանխարգելման ուղղության շրջանակներում մատուցվող ծառայությունների ֆինանսավորման գործում՝ 110.7%՝ ծրագրված ցուցանիշը գերազանցելով 2.2 տոկոսային կետով: Այդպիսի աճը գլխավորապես հետևանք է պրոբացիայի ծառայություններին հատկացվող բյուջետային միջոցների կտրուկ ավելացմամբ, պայմանավորված ծառայության աշխատակիցների աշխատավարձի բարձրացման և հսկման մեծաքանակ էլեկտրոնային սարքավորումների ձեռքբերման հետ:

2024թ. Ոլորտային աճի տեմպի միջին մակարդակից 0.7 տոկոսային կետով բարձր աճ է գրանցվել նաև «Կառավարում» բաղադրիչի ծախսերի ուղղությամբ: Ընդ որում, այդ աճը գրանցվել է այն պարագայում, երբ 2024թ. ծրագրով նախատեսված էր այդ բաղադրիչի ֆինանսավորման նվազեցում 2023թ. համեմատությամբ 4.3 տոկոսային կետով:

Այսպիսի աճի պայմաններում խիստ մտահոգիչ է «Կարողությունների հզորացում» ուղղության ֆինանսավորման վիճակը. 2023թ. համեմատությամբ 2024թ. բյուջետային ծախսերը նվազել են մոտ 26.0 %-ով, ծրագրված մակարդակից 10.0 %-ով ավելի:

Նույն կերպ անբավարար է գնահատվում «Կրթություն» ուղղության ֆինանսավորման վիճակը: 2024թ. փաստորեն այդ ուղղության ֆինանսավորումը 2023թ. համեմատությամբ նվազել է 7.1 տոկոսային կետով և դա այն դեպքում, երբ ծրագրված էր 108.1 %-ի աճի տեմպ:

Իսկ ահա «Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում» ուղղության նախատեսված նվազեցումը 0.5 տոկոսային կետով ըստ էության կատարվել է և 2024թ. ֆինանսավորման նվազման տեմպը կազմել է 99.4 %:

Վերոհիշյալ վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ երկրում հակակոռուպցիոն պայքարի շրջանակներում.

- առաջանցիկ տեմպերով են ֆինանսավորվում կոռուպցիայի հակազդման ուղղությունների ծախսերը՝ ապահովելով ոլորտային ծախսերի «առյուծի» բաժինը՝ 75.6%, ինչը ավելի քան 30 անգամ գերազանցում է հակակոռուպցիոն կրթության ու կոռուպցիայի կանխարգելման հատկացումներ չափաբաժին,
- վերոհիշյալի հետ մեկտեղ շարունակական աճ է դիտարկվում նաև հակակոռուպցիոն պայքարի կառավարման ոլորտում, ինչին հատկացվում են բյուջետային հատկացումների 14.3%-ը,
- պատշաճ ուշադրություն չի դարձվում հակակոռուպցիոն կրթությանն ու կոռուպցիայի կանխարգելմանը՝ որոնց բյուջետային հատկացումները կազմում են ոլորտային ծախսերի սոսկ 2.5 %-ը: Ընդ որում, դիտարկվում է այդ ուղղությունների բյուջետային հատկացումների շարունակական նվազման միտում,
- միաժամանակ հուսադրող չէ իրավական իրազեկման և տեղեկատվության ապահովման ծառայությունների ֆինանսավորման հարաշարժը և հատկացվող ուշադրությունը. 2024թ. այդ նպատակով

բյուջետային հատկացումները կազմել են ոլորտային ծախսերի սոսկ 1.65%-ը:

Հակակոռուպցիոն պայքարի ֆինանսավորման բաշխավաճությունն ըստ ուղղությունների ներկայացված է թիվ 4 ինֆոգրաֆիկայում

Ինֆոգրաֆիկա 4



III. Արդարադատության ոլորտի բյուջեն ըստ ԲԳԿ-ների, ծրագրերի և միջոցառումների

Ոլորտում պետական քաղաքականությունը 2024թ.-ին իրականացվել է 17 բյուջետային ծրագրերի միջոցով, որոնցից 8-ը համակարգվել են ԱՆ-ի կողմից, 3-ը՝ Դատախազության, իսկ 6 ՍԱԻ մարմիններից յուրաքանչյուրն իրականացրել է մեկական ծրագիր:

17 բյուջետային ծրագրերը իրականացվել են 78 քաղաքականության միջոցառումներով (այսուհետ՝ ՔՄ): Բոլոր բյուջետային ծրագրերի համար մշակված են առանձնահատուկ նպատակներ և վերջնական արդյունքի ցուցանիշներ, իսկ բոլոր 78 ՔՄ-ների համար մշակվել են 684 ոչ ֆինանսական (կատարողական) ցուցանիշներ,

այդ թվում՝ 441 քանակական, 201 որակական և 42 ժամկետային ցուցանիշներ: Այդ ցուցանիշների բաշխվածությունն ըստ ԲԳԿ-ների բնութագրվում են հետևյալ տվյալներով.

Աղյուսակ 2.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ 2024 Թ. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ


հ/հ ը/կ	ՊԿՄ, ՄԻԱՄ	Ծրագրերի թիվը, միավոր	Միջոցա- ռումների թիվը, միավոր	Ոչ ֆինանսակ- ան ցուցանիշնե- ր, ընդամենը, հատ	Այդ թվում՝		
					Քանա- կական	Որակա- կան	Ժամկե- տային
Ա	1	2	3	4	5	6	7
1	ՀՀ արդարադատության և նախարարություն	8	29	223	130	65	28
2	ԸՆԴԱՄԵՆԸ ՄԻԱ ՄԱՐՄԻՆՆԵՐ	9	49	461	311	136	14
2.1	ՀՀ սահմանադրական դատարան	1	3	14	7	2	5
2.2	ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ	1	24	309	211	97	1
2.3	ՀՀ դատախազություն	3	6	18	7	7	4
2.4	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե	1	5	21	10	9	2
2.5	ՀՀ քննչական կոմիտե	1	7	15	10	3	2
2.6	ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	1	2	68	51	17	0
2.7	ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ	1	2	16	15	1	0

ԸՆԴԱՄԵՆԸ ՈԼՈՐՏ	17	78	684	441	201	42
-------------------	----	----	-----	-----	-----	----

Աղբյուր՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն

Ոչ ֆինանսական ցուցանիշների բաշխվածությունն ըստ քանակական, որակական և ժամկետային ցուցանիշների բնութագրվում է թիվ 5 ինֆոգրաֆիկայում:

Ինֆոգրաֆիկա 5



Ոլորտային ծրագրերի 2024թ բյուջեի 32.2 տոկոսը կամ 24,1 մլրդ դրամն ուղղվել է ԱՆ ծրագրերի իրականացմանը, իսկ 67.8 տոկոսը կամ 50,7 մլրդ դրամը՝ 7 ՍԱԻ մարմինների ծրագրերի իրականացմանը:

Ֆինանսավորման ծավալներով առաջին տեղում է ԱՆ 32.2 տոկոս, որին հաջորդում են ԲԴԽ-ը, Քննչական կոմիտեն և Դատախազությունը, համապատասխանաբար ոլորտում ծախսերի մեջ 24.8, 22.5 և 13.9 տոկոս կշիռներով: ՀԿԿ-ի բյուջետային միջոցները կազմում են ոլորտային ողջ բյուջեի 4.2 տոկոսը, Սահմանադրական դատարանի միջոցները՝ 1.1, ՄԻՊ աշխատակազմի միջոցները՝ 0.8 և ԿԿՀ-ի միջոցները՝ 0.6 տոկոսը:

2023 թ. համեմատությամբ 2024թ-ին բյուջետային ֆինանսավորման ամենամեծ աճի տեմպը գրանցվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսավորման մասով՝

117.9 տոկոս: Աճի տեմպով հաջորդում են ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի փաստացի ֆինանսավորումը 113.3 տոկոս, Բարձրագույն դատական խորհրդի՝ 109.2 տոկոս, ՀՀ Քննչական կոմիտեի՝ 108.6 տոկոս, ՄԻՊ աշխատակազմի՝ 103.0 տոկոս, Դատախազության՝ 102.5 տոկոս: Դրան հակառակ ՀՀ սահմանադրական դատարանի և ԱՆ կողմից իրականացվող ծրագրերի կատարման մասով աճի տեմպը նվազել է, կազմելով, համապատասխանաբար, 96.9 տոկոս և 95.2 տոկոս: ՀՀ ԱՆ համակարգի ֆինանսավորման նվազումը տեղի է ունեցել հետևյալ ծրագրերի ֆինանսավորման կրճատման հաշվին.

- 1057 «Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում» ծրագրին ուղղված ծախսերը 2023 թ. համեմատությամբ նվազել են 4.0 տոկոսով,
- 1228 «Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգի իրականացում» ծրագրի ծախսերը՝ 91.9 տոկոսով: Ի դեպ, այս ծրագրի իրականացման համար հաստատված պլանով ծախսեր նախատեսված չեն եղել,
- 1120 «Քրեակատարողական ծառայություններ» ծրագրի ծախսերը նվազել են 2.4 տոկոսով:

Նախորդ տարվա համեմատ ֆինանսավորման բացարձակ աճի առումով առաջին տեղում է ԲԴԽ «Դատական իշխանության գործունեության ապահովում և իրականացում» ծրագիրը, ինչը 2024 թ-ին աճել է մոտ 1,6 մլրդ դրամով: Երկրորդ դիրքում է ՀՀ քննչական կոմիտեի «ՀՀ քննչական ծառայություններ» ծրագիրը, որի ծախսերը աճել են 1,3 մլրդ դրամով: Հաջորդում է Հակակոռուպցիոն կոմիտեի «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության ապահովում» ծրագիրը, որի աճը կազմել է 473.6 մլն դրամ:


2024թ. Ոլորտի ծրագրերի փաստացի ծախսերը կազմել են 74,8 մլրդ դրամ, ընդհանուր առմամբ ապահովելով Օրենքով հաստատված տարեկան ծրագրի 99.2% կատարողական: Ոլորտի ծախսերը նախորդ տարվա համեմատ ավելացել են 2,4 մլրդ դրամով կամ 3.3 տոկոսով:

2024 թ. Ոլորտին հատկացված ընդհանուր ծախսերի կառուցվածքը ըստ ԲԳԿ-ների բնութագրվում է հավելված 6-7-ի տվյալներով, իսկ ծրագրերն ու միջոցառումները ըստ ԲԳԿ-ների՝ հավելված 8-ի տվյալներով:


«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

2024 թ. Ոլորտին հատկացված ընդհանուր ծախսերի կառուցվածքը ըստ ԲԳԿ-ների, ծրագրերի և միջոցառումների ներկայացված է ինֆոգրաֆիկաներ 6-ում և 7-ում.

Ինֆոգրաֆիկա 6



Ինֆոգրաֆիկա 7



2024թ. Ուորտի ծրագրերի փաստացի կատարողականը ըստ ԲԳԿ-ների բնութագրվում է ստորև ներկայացվող աղյուսակի տվյալներով.

Աղյուսակ 3.

ՀՀ արդարադատության ոլորտին 2024 թվականին հատկացված բյուջետային միջոցների կատարողականը ըստ ԲԳԿ-ների

Հ/Հ Ը/Կ	ԲԳԿ	2023թ. փաստ (2024թ. հետ համա- դրելի), մլն դրամ	2024թ. հաստա տված պլան, մլն դրամ	2024թ. փաստ, մլն դրամ	Կատա րողակ ան հաս- տատվ ած պլանի նկատ- մամբ (%)	2024թ. 2023թ. նկատ- մամբ (%)	2024թ. և 2023թ. տարբե- րություն- ը, մլն դրամ
Ա	Բ	1	2	3	4	5	6
	ԸՆԴԱՄԵՆԸ	72,372.1	75,421.0	74,824.0	99.2	103.4	2,451.9
1	ՀՀ սահմանադրական դատարան	856.1	844.2	829.3	98.2	96.9	(26.8)
2	Բարձրագույն դատական խորհուրդ	16,991.7	19,173.7	18,554.8	96.8	109.2	1563.1
3	ՀՀ դատախազություն	10,125.1	10,053.8	10,377.5	103.2	102.5	252.4
4	ՀՀ արդարադատության նախարարություն	25,337.5	23,191.3	24,125.9	104.0	95.2	(1,211.6)
5	ՀՀ ՄԻՊ աշխատակազմ	557.3	587.1	573.8	97.7	103.0	16.5
6	ՀՀ քննչական կոմիտե	15,479.1	17,462.9	16,813.2	96.3	108.6	1,334.1
7	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	380.9	412.8	431.5	104.5	113.3	50.6
8	ՀՀ հակակոռուպցիոն	2,644.4	3,695.1	3,118.0	84.4	117.9	473.6

	կոմիտե						
--	--------	--	--	--	--	--	--

2024թ. Ոլորտի ծրագրերի փաստացի կատարողականը ըստ ԲԳԿ-ների բնութագրող թիվ 3 աղյուսակի, Ոլորտին հատկացված ընդհանուր ծախսերի կառուցվածքը ըստ ԲԳԿ-ների բնութագրող հավելված 3-ի, Ոլորտի ծրագրերն ու միջոցառումները ըստ ԲԳԿ-ների բնութագրող հավելված 4-ի, ինչպես նաև՝ Ոլորտին հատկացված ընդհանուր ծախսերի կատարողականի՝ ըստ իրականացված ծրագրերի, վերաբերյալ տվյալների վերլուծությունը՝ առանձին-առանձին ԲԳԿ-ներով տրվում է սույն վերլուծության հաջորդ մասում:

IV. Արդարադատության նախարարության բյուջետային ծրագրերը

ԱՆ բյուջեն 2024-ին կատարվել է 104 տոկոսով և կազմել է 24.1 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 1.2 մլրդ դրամով կամ 4.8 տոկոսով: ԱՆ ընդհանուր բյուջետային հատկացումներից 848.8 մլն դրամը կամ 3.5 տոկոսը բաժին է ընկնում կապիտալ ծախսերին:

Գերաձախսը հիմնականում պայմանավորված է «Քրեակատարողական ծառայություններ», «Հարկադիր կատարման ծառայություններ» և «Դատական և հանրային պաշտպանություն» ծրագրերի կատարողականով:

Հաշվետու ժամանակահատվածում ԱՆ կողմից իրականացվել է 8 ծրագիր՝ 29 ՔՄ-ներով:

«Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում» ծրագրի շրջանակներում 2024թ. օգտագործվել է 2.3 մլրդ դրամ՝ 99.3%-ով ապահովվելով ծրագրված ցուցանիշը: Օգտագործված միջոցների հիմնական մասը՝ շուրջ 2 մլրդ դրամն ուղղվել է «Արդարադատության ոլորտում քաղաքականության, խորհրդատվության, մոնիտորինգի, գնման և աջակցության իրականացում» միջոցառմանը, որի կատարողականը կազմել է 99.5%: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերը նվազել են 4%-ով կամ 96 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված «Աջակցություն օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոնի գործունեությանը» և «Արդարադատության

ուղորտում քաղաքականության, խորհրդատվության, մոնիտորինգի, գնման և աջակցության իրականացում» միջոցառումների շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ: Վերջին միջոցառման շրջանակներում 2023թ. միջոցներ էին հատկացվել Հայաստանում ստեղծվող արբիտրաժային նոր կենտրոնի նյութատեխնիկական, ներառյալ՝ շենքային պայմանների ապահովման նպատակով:

«*Ղատական և հանրային պաշտպանություն*» ծրագրին հատկացված 2.3 մլրդ դրամ՝ հաստատված ծրագրով նախատեսված 2.0 մլրդ դրամի դիմաց և նախորդ տարվա համեմատ գրեթե փոփոխություն չի կրել: Միջոցներից 966 մլն դրամն ուղղվել է Փորձաքննությունների ծառայությունների տրամադրման միջոցառմանը, որի գծով ծախսերը 2023թ. համեմատ նվազել են 21.8%-ով կամ 269 մլն դրամով: Միջոցառման շրջանակներում կատարվել է 15,411 փորձաքննություն՝ կանխատեսված 13,641-ի և նախորդ տարվա 21,169-ի դիմաց: «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի գործունեությանն աջակցության ծախսերը 2024թ. կազմել են 435.4 մլն դրամ և նախորդ տարվա համեմատ ավելացել 44.3%-ով (133.7 մլն դրամով), ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամն իր գործունեությունը սկսել է 2023թ. երկրորդ կիսամյակից:

«*Քրեակատարողական ծառայություններ*» ծրագրի ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 14 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 101.7%-ը: Գերաձախսը հիմնականում արձանագրվել է «ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում» միջոցառման ծախսերում: Նախորդ տարվա համադրելի ցուցանիշի համեմատ «Քրեակատարողական ծառայություններ» ծրագրի ծախսերը նվազել են 350.0 մլն դրամով:

Ծրագրին կատարված հատկացումների գերակշիռ մասը՝ 12.4 մլրդ դրամն ուղղվել է «Քրեակատարողական ծառայություններ» միջոցառմանը, որի շրջանակներում իրականացվել է 2,607 դատապարտյալների և կալանքի տակ գտնվող անձանց վերահսկողություն, կալանավայրերում դատապարտյալների կացության ապահովում, դատապարտյալների սոցիալ-հոգեբանական վերականգնում և ուսուցում՝ կանխատեսված 3,000-ի դիմաց: Միջոցառման ծախսերը կատարվել են 99.3%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ աճել են 2.7%-ով կամ 320.3 մլն դրամով՝ պայմանավորված աշխատավարձի բազային դրույքաչափի բարձրացմամբ:

Ծրագրի շրջանակներում պրոբացիայի ծառայությունների գծով ծախսերը 2024թ. կազմել են 768.3 մլն դրամ՝ 98.8%-ով ապահովելով ծրագրված ցուցանիշը և 9.6%-ով (67.3 մլն դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է պրոբացիայի ծառայության ծառայողների

վարձատրության չափերի փոփոխությամբ: Պրոբացիայի ծառայության շահառուների թվաքանակը 2024թ. կազմել է 13,883՝ նախատեսված 7,500-ի և նախորդ տարվա 7,995-ի դիմաց:

ԱՆ պրոբացիայի ծառայության կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովման միջոցառման շրջանակներում պրոբացիայի շահառուների նկատմամբ էլեկտրոնային միջոցներով հսկողություն կիրառելու նպատակով ձեռք են բերվել էլեկտրոնային հսկողության սարքեր և պրոբացիայի ծառայությանն անհրաժեշտ վարչական սարքավորումներ: Միջոցառման շրջանակներում օգտագործվել է 585.2 մլն դրամ, գերազանցելով ծրագրված միջոցները 4,2 անգամ կամ 445.7 մլն դրամով: Միջոցառման ծախսերը նախորդ տարվա համեմետ ավելացել են նաև 37.7 մլն դրամով կամ 6.9 տոկոսով:

Քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների բարելավման նպատակով տրամադրվել է 55.8 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 33.2%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ նոր քրեակատարողական հիմնարկի նախագծի մշակման և վերանորոգման աշխատանքների ընթացքում առաջացել են խնդիրներ, որոնց պատճառով աշխատանքները դադարեցվել են, իսկ ժամկետները՝ հետաձգվել:

«Իրավական իրազեկման և տեղեկատվության ապահովում» ծրագրին տրամադրվել է 1.2 մլրդ դրամ, որը կատարվել է գրեթե 100%-ով և նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չի կրել: Ծրագրի միջոցներից 374.9 մլն դրամ ուղղվել է «Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ» միջոցառմանը: Միջոցառման շրջանակներում հրատարակված էլեկտրոնային էջերի քանակը կազմել է 77,844, www.arlis.am կայքում առկա իրավական ակտերի քանակը՝ 184,950՝ կանխատեսված 178,000-ի փոխարեն:

260.8 մլն դրամ ուղղվել է «Թարգմանչական ծառայություններ» միջոցառմանը, ինչը կատարվել է 100 տոկոսով և նախորդ տարվա համեմատությամբ փոփոխությունների չի ենթարկվել: Միջոցառման շրջանակներում ապահովվել է ՀՀ, ԵՏՄ, ԵՄ իրավական ակտերի, ՀՀ ազգային զեկույցների, ՀՀ պետական մարմինների կողմից միջազգային կառույցներ ներկայացվող և այդ կառույցների կողմից ՀՀ մարմիններ ներկայացվող փաստաթղթերի, այլ պետությունների հետ ՀՀ երկկողմ հարաբերությունների շրջանակներում դատական ակտերի և հարակից փաստաթղթերի, ՀՀ վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և հանձնարարվող այլ առանցքային փաստաթղթերի թարգմանությունը: Հաշվետու տարում միջոցառման շրջանակներում անգլերեն, ռուսերեն, հայերեն և այլ լեզուներով թարգմանված, վերանայված և խմբագրված/սրբագրված նյութերի ծավալը կազմել է 25,566 թարգմանչական էջ՝ նախատեսված 25,544-ի դիմաց:

Արխիվային ծառայություններ միջոցառման շրջանակներում ապահովվել է արխիվային հավաքածուի պահպանությունը, համալրումը, հաշվառումը, թվայնացումը, հանրության կողմից արխիվային նյութերի օգտագործումը, որի գծով ծախսերը կազմել են 599.5 մլն դրամ, ապահովելով 100 տոկոս կատարողական:

«Հարկադիր կատարման ծառայություններ» ծրագրի շրջանակներում հաշվետու տարում օգտագործվել է 3.7 մլրդ դրամ՝ ապահովելով 117.3% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերը նվազել են 1.8%-ով կամ 68.1 մլն դրամով, ինչը պայմանավորված է Հարկադիր կատարման ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավման ծախսերի նվազման, շենքային պայմանների ապահովման և տրանսպորտային միջոցներով ապահովվածության բարելավման նպատակով ծախսերի չկատարման (2023թ. նման միջոցներ հատկացվել էին) և **«Հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարումն ապահովող ծառայություններ»** միջոցառման ծախսերի աճի արդյունքում: Ծրագրի շրջանակներում օգտագործված միջոցների հիմնական մասը՝ շուրջ 3.6 մլրդ դրամն ուղղվել է **«Հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարումն ապահովող ծառայություններ»** միջոցառմանը, ինչը կատարվել է 117.6%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 2.9%-ով (շուրջ 100 մլն դրամով), ինչն ուղղվել է հարկադիր կատարման ծառայությունում պարզևատրման համակարգի ներդրմանը:

«Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգի իրականացում» ծրագրին 2024թ. տրամադրվել է 58.4 մլն դրամ, ինչի համար հաստատված ծրագրով հատկացում չի նախատեսվել: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 91.9%-ով (660.5 մլն դրամով): Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2023թ. «Էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման կամ արդիականացման նախագծերի ապահովում» միջոցառման շրջանակներում հատկացվել էր 417.1 մլն դրամ, ինչպես նաև Հակակոռուպցիոն դատարանի շենքային պայմանների ապահովման ծախսերը նվազել են (այդ նպատակով 2023թ. հատկացվել էր 301.8 մլն դրամ, իսկ 2024թ. շենքի կապիտալ վերանաբոցման աշխատանքներն ավարտին հասցնելու նպատակով հատկացվել է ընդամենը 58.4 մլն դրամ):

ԱՆ համակարգի 2024 թ. բյուջետային հատկացումների ծավալն ըստ ծրագրերի և դրանց կառուցվածքը բնութագրվում է ստորև ներկայացվող աղյուսակի և ինֆոգրաֆիկայի տվյալներով.


Աղյուսակ 4.

ԱՆ համակարգի 2024 թ.բյուջետային հատկացումների ծավալն ու կառուցվածքը

ըստ ծրագրերի

Հ/Հ Ը/Կ	Ծրագրի Դասիչը	Ծրագրի անվանումը	2024 հազար դրամ	Ծախսերի տեսակարար կշիռը Ոլորտի ընդհանուր ծախսերի մեջ, տոկոս
Ա	Բ	1	2	3
1	1052	Քաղաքացիական կացության ակտերի գրացում	156,433.2	0.65
2	1057	Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում	2,288,820.52	9.49
3	1093	Դատական և հանրային պաշպանություն	2,233,710.9	9.26
4	1120	Քրեակատարողական ծառայություններ	14,003,327.09	58.04
5	1123	Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում	1,235,130.48	5.12
6	1149	Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում	468,463.59	1.94
7	1182	Հարկադիր կատարման ծառայություններ	3,681,587.51	15.26
8	1228	Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգի իրականացում	58,388.87	0.24

Ինֆոգրաֆիկա 8



V. Սահմանադրական անկախ և ինքնավար մարմինների բյուջետային ծրագրերը

1. Սահմանադրական դատարանի (ՄԴ) կողմից 2024 թ. իրականացվել է 1 բյուջետային ծրագիր, ուղղված ՀՀ ՄԴ գործունեության ապահովմանը: Այս ծրագիրն իր մեջ ներառում է 3 ՔՄ, որոնց համար նախատեսված 844.2 մլն. դրամի դիմաց հատկացվել է 829.3 մլն դրամ, ինչը 26.8 մլն դրամով կամ 3.1 տոկոսային կետով պակաս է 2023 թ. համեմատ և կազմում է Ոլորտին բյուջետային հատկացումների 1.11 տոկոսը:

ՀՀ ՄԴ-ին «Սահմանադրական դատարանի գործունեության ապահովում» ծրագրի շրջանակներում 2024թ. պետական բյուջեից տրամադրվել է 829.3 մլն դրամ՝ ապահովելով 98.2% կատարողական: Միջոցները հիմնականում ուղղվել են ՄԴ գործունեության և սահմանադրական արդարադատության ապահովման միջոցառմանը, որի ծախսերը կազմել են 807.7 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 98.6%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: 2023թ. համեմատ միջոցառման ծախսերը նվազել են 20.7 մլն դրամով կամ 2.5 տոկոսով: ՄԴ ուղղված դիմումների քանակը կազմել է 267՝ նախորդ տարվա 375-ի դիմաց, նորմատիվ կամ անհատական իրավական ակտերի սահմանադրականության ստուգման դիմումների և դրանց վերաբերյալ կայացվող որոշումների քանակը՝ 121՝ նախորդ տարվա 165-ի դիմաց:

ՄԴ տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով տրամադրվել է 5.2 մլն դրամ՝ ապահովելով 59.9% կատարողական: Միջոցառման շրջանակներում նախատեսված համակարգչային սարքավորումներն ամբողջ ծավալով ձեռք են բերվել, իսկ ծախսերի ցածր ցուցանիշը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

2023թ. համեմատ ՄԴ ծախսերը նվազել են 3.1%-ով (26.8 մլն դրամով)՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության, դատարանի շենքի ընթացիկ նորոգման, ինչպես նաև՝ տեխնիկական հագեցվածության բարելավման ծախսերի նվազմամբ:

2. Բարձրագույն դատական խորհրդին (ԲԴԽ) 2024 թ. հատկացվել է 18,554.8 մլն դրամ, ինչը 2023 թ. համեմատ ավել է 1,563.2 մլն. դրամով կամ 9.2 տոկոսով: Դա հիմնականում պայմանավորված է 2024թ.-ից դատավորներին տրվող հավելումներով:

ԲԴԽ-ին հատկացված բյուջետային միջոցները կազմել են ՍՄԲ մարմինների բյուջետային ֆինանսավորման 36.6 տոկոսը կամ Ոլորտի ֆինանսավորման 24.7 տոկոսը:

ԲԴԽ պատասխանատվությամբ 2024թ. իրականացվել է մեկ ծրագիր՝ 24 ՔՄ-ներով: Միջոցները հիմնականում հատկացվել են ԲԴԽ և դատարանների բնականոն գործունեության ապահովման, դատական իշխանության անկախության երաշխավորման և ՀՀ դատարանների կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովմանն ուղղված միջոցառումներին, որոնց ծախսերը կազմել են 17,625.1 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի՝ 99.6%-ը: Շեղումը պայմանավորված է թափուր հաստիքների առկայությամբ և տնտեսումներով:

ԲԴԽ ծախսերի կատարողականը հիմնականում պայմանավորված է նաև «Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների շենքային պայմանների բարելավում» միջոցառմանը հատկացված 425.5 մլն դրամը չօգտագործելու հանգամանքով:

ԲԴԽ տեխնիկական հագեցվածության բարելավման ծախսերը կազմել են 537 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 83%-ը: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

3. ՀՀ դատախազությանը 2024 թ. բյուջետային տարում հատկացվել է 10,377.5 մլն դրամ, ինչը 2023 թ. համեմատությամբ ավել է 252.4 մլն դրամով կամ 2.5

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

տոկոսով), ինչը պայմանավորված է Դատական ղեկավարման և դատախազական հսկողության ծրագրի ծախսերի աճով: Դատախազության բյուջետային հատկացումները կազմել են ՍԱԻ մարմինների բյուջետային ֆինանսավորման 20.5 տոկոսը կամ Ոլորտի ֆինանսավորման 13.9 տոկոսը:

Դատախազության կողմից 2024 թ. իրականացվել է 3 ծրագիր՝ 6 քաղաքականության միջոցառումներով:

Դատախազությանը 2024թ. տրամադրվել է 10.4 մլրդ դրամ՝ ապահովելով հաստատված ծրագրային ցուցանիշի 103.2% կատարողական:

Միջոցների գերակշիռ մասը՝ 9.5 մլրդ դրամը կամ 91.5 տոկոսը, տրամադրվել է «Դատական ղեկավարում և դատախազական հսկողություն» ծրագրին, ինչը գերակատարվել է 103.6%-ով: Ծրագրի շրջանակներում 9.3 մլրդ դրամ են կազմել «Քրեական հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծառայությունների տրամադրում» միջոցառման ծախսերը, որոնք կատարվել են 103.4%-ով: Միջոցառման շրջանակներում նախաձեռնված քրեական վարույթների ընդհանուր թիվը կազմել է 39,397, ավարտված քրեական վարույթների թիվը՝ 38,058, պետական շահերի պաշտպանության ոլորտում իրականացված գործառնությունների արդյունքում պետությանը և համայնքներին պատճառված վերականգնված վնասի չափը՝ 2,862 մլն դրամ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործառնության շրջանակներում ներկայացված հայցագնի ընդհանուր գումարը՝ 287,742 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերի 2.5% աճը (229.8 մլն դրամ) հիմնականում պայմանավորված է առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնող անձանց դրույքաչափերի բարձրացմամբ:

«Փորձաքննության ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2024թ. գրեթե ամբողջությամբ օգտագործվել են նախատեսված միջոցները՝ 872.8 մլն դրամ, և իրականացվել է 15,013 փորձաքննություն՝ 2023թ. 15,052-ի դիմաց:

4. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին (ՀԿԿ) 2024 թ. հատկացված բյուջետային միջոցները 2023 թ. համեմատ ավելացել են 17.9 տոկոսով կամ 473.6 մլն դրամով և կազմել են շուրջ 3,118 մլրդ դրամ:

ՀԿԿ կողմից 2024 թ. իրականացվել է 1 ծրագիր՝ 5 քաղաքականության միջոցառումներով, ուղղված կոռուպցիոն հանցագործությունների բացահայտմանը և քննության ապահովմանը:

ՀԿԿ պատասխանատվությամբ իրականացվող «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում և քննության ապահովում» ծրագրին 2024թ. ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 3.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային

ցուցանիշի 84.4% կատարողական: Ծրագրային ցուցանիշից շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ կոմիտեի ծախսերի 17.9% (473.6 մլն դրամ) աճը արձանագրվել են «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում և քննություն» միջոցառման գծով:

ՀԿԿ-ին հատկացված միջոցները հիմնականում ուղղվել են «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում և քննություն» միջոցառմանը, ինչի ծախսերը կազմել են 3 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 86.9%-ը՝ պայմանավորված թափուր հաստիքների առկայությամբ: Միջոցառման շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում վարույթում քննված քրեական գործերի ընդհանուր թիվը կազմել է 2,289 նախորդ տարվա 1,824-ի դիմաց, իսկ բացահայտված կոռուպցիոն հանցագործությունների թիվը՝ 1,585 նախորդ տարվա 1,632-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ միջոցառման ծախսերն աճել են 22.9%-ով (565.4 մլն դրամով)՝ հիմնականում հաստիքների համալրման արդյունքում:

ՀԿԿ տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով օգտագործվել է նախատեսված միջոցների 37.1%-ը՝ 28.5 մլն դրամ: Թերաժախսը պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած տնտեսումներով և նախատեսված որոշ գույքի ձեռքբերման պահանջի վերացմամբ: Նախորդ տարվա համեմատ կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավման ծախսերը նվազել են 80.6%-ով (118.4 մլն դրամով)՝ պայմանավորված ձեռք բերված տեխնիկայի և սարքավորումների ծավալների նվազմամբ:

5. ՀՀ քննչական կոմիտեին (ՔԿ) 2024 թ. հատկացված բյուջետային միջոցները կազմել են շուրջ 16,813.2 մլն դրամ, ապահովելով կանխատեսվածի (17,462.9 մլն դրամ) 96.3 տոկոսը, ինչը կազմում է Ոլորտին հատկացված բյուջետային միջոցների 22.5 տոկոսը և ՄԱԲ մարմինների բյուջետային հատկացումների շուրջ 33.2 տոկոսը:

ՔԿ-ն 2024թ. իրականացրել է 1 ծրագիր (7 ՔՄ), ինչն ուղղվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ՀՀ քննչական կոմիտեի իրավասությանը վերապահված ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ նախաքննության իրականացմանը, քննված քրեական գործերով հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների պարզմանը և դրանք վերացնելուն ու կանխելուն ուղղված միջոցների ձեռնարկմանը:

2024թ. ՔԿ բյուջետային միջոցների թերաձախսը հիմնականում առաջացել է «Քրեական գործերով վարույթի իրականացում» միջոցառման ծախսերի նվազմամբ՝ պայմանավորված գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով և թափուր հաստիքների առկայությամբ:

Այս միջոցառման ծախսերը կազմել են 15.5 մլրդ դրամ կամ ծրագրվածի 92.3%-ը:

Նախորդ տարվա համեմատ ՔԿ ծախսերի աճը կազմել է 8.6% (1,334.1 մլն դրամ), ինչը հիմնականում պայմանավորված է քրեական գործերով վարույթի իրականացման և ՔԿ պահուստային ֆոնդի ծախսերի համապատասխանաբար 15.9% (2.1 մլրդ դրամ) և 2.9 անգամ (192.9 մլն դրամ) աճով, ինչպես նաև ՔԿ հաստիքների ավելացմամբ: Նախորդ տարվա համեմատ ծախսերի աճը պայմանավորված է նաև «ՀՀ քննչական կոմիտեի փորձաքրեագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացված միջոցներով, որոնք կազմել են 670.2 մլն դրամ: Վերոհիշյալի հետ մեկտեղ պետք է նշել, որ նախորդ տարի միջոցներ էին հատկացվել «ՀՀ քննչական կոմիտեի շենքային պայմանների բարելավում» և «ՀՀ քննչական կոմիտեի շենքային պայմաններով ապահովում» միջոցառումներին, որոնք 2024թ. չեն նախատեսվել:

6. ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) կողմից իրականացվել 1 բյուջետային ծրագիր՝ 2 քաղաքականության միջոցառումներով, ուղղված կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացման ապահովմանը:

ԿԿՀ-ին 2024 թվականին հատկացվել է 431.5 մլն դրամ պետական բյուջեով նախատեսված 412.8 մլն դրամի դիմաց: ԿԿՀ-ին հատկացված բյուջետային միջոցները կազմում են Ոլորտային հատկացումների 0.58 տոկոսը կամ ՄԱԻ մարմններին բյուջետային հատկացումների 0.85 տոկոսը:

Ծրագրի շրջանակներում սահմանվել է «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնադրիչը», մշակվել են բարելավարժության ուսումնասիրության և գնահատման, հայտարարագրերի ստուգման և վերլուծության նոր մեթոդաբանությունները, սահմանվել են

հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչները, գործարկվել է ԿԿՀ նոր կայքը, արդիականացվել է հայտարարագրման համակարգը և այլն:

ԿԿՀ կողմից 2024թ. բյուջետային հատկացումների կատարողականը կազմել է 104.5%: Հատկացումների հիմնական մասը՝ 419.4 մլն դրամ, ուղղվել է «Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում» միջոցառմանը, ինչը կատարվել է 108.7%-ով: Դրանից 12.1 մլն դրամ ուղղվել է «Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանքներ» միջոցառմանը՝ ապահովելով 45% կատարողական:

Նախորդ տարվա համեմատ ԿԿՀ ծախսերն աճել են 13.3%-ով (50.5 մլն դրամով), ինչը պայմանավորված է «Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում» միջոցառման ծախսերի 12.8% (47.6 մլն դրամ) աճով՝ կապված «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված 2022 և 2023 թվականների տարեկան հաշվետվությունների աուդիտի անցկացման հետ:

7. Մարդու իրավունքների պաշտպանության քաղաքականության շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) աշխատակազմը շարունակել է իրականացնել Մարդու իրավունքների պաշտպանության 2023-2025թթ. ազգային ռազմավարությունից բխող գործողությունները:

Այդ ռազմավարության շրջանակներում ՄԻՊ աշխատակազմը 2024թ. իրականացրել 1 բյուջետային ծրագիր՝ «Մարդու իրավունքների պաշտպանություն» ծրագիրը, 2 քաղաքականության միջոցառումով:

Ծրագրի իրականացման համար 2024 թ. բյուջեից հատկացվել են 573.8 մլն դրամ միջոցներ, ինչը կազմում է Ոլորտային հատկացումների 0.77 տոկոսը և ՍԱԻ մարմիններին հատկացված միջոցների 1.13 տոկոսը: 2024 թվականին կատարված ծախսերը 16.5 մլն դրամով կամ 3 տոկոսով գերազանցում են 2023 թվականի մակարդակը:

2024թ. ծրագրի վրա բյուջետային ծախսերը կազմել են 573.8 մլն դրամ՝ ապահովելով 97.7% կատարողական: Թերաձախսը հիմնականում պայմանավորված է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում» միջոցառման ցածր կատարողականով:

2024թ. այդ միջոցառման արդյունքային ցուցանիշները հիմնականում գերակատարվել են: Հաշվետու տարում միջոցառման ծախսերը կազմել են 570.5 մլն դրամ, որոնք կատարվել են 97.8%-ով՝ պայմանավորված գործուղումների, գնման գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով, ինչպես նաև թափուր հաստիքների առկայության արդյունքում աշխատանքի վարձատրության համար նախատեսված միջոցների տնտեսմամբ:

Նախորդ տարվա համեմատ ՄԻՊ աշխատակազմի ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում» միջոցառման ծախսերի 4.1% (22.6 մլն դրամ) աճով՝ հիմնականում պայմանավորված հաստիքների փոփոխության և քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի բնականոն աճի արդյունքում աշխատանքի վարձատրության գծով ծախսերի աճով: Հարկ է նշել, որ 2023թ. 5.4 մլն դրամ էր ուղղվել Հայաստանի իրավապահ համակարգում գենդերային հավասարության խթանման միջոցառման իրականացման համար, որին 2024թ. միջոցներ չեն հատկացվել:

VI. Եզրակացություններ և առաջարկություններ

Ամփոփելով, կարելի է հանգել այն եզրակացությանը, որ Ոլորտում իրականացվող քաղաքականությունը բոլորովին էլ չի բխում ինչպես Ոլորտում նախատեսված բարեփոխումների բազմաթիվ ռազմավարական ծրագրերի նպատակներից ու արդյունքային ցուցանիշներից, այնպես էլ ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններից ու հանձնառություններից: Այսպիսի իրավիճակի հետևանք են երկրում դատա-իրավական բարեփոխումների և հակակոռուպցիոն պայքարի ներկա մարտահրավերները, որոնք արտահայտվել են 2018թ. հետո կոռուպցիայի ընկալման համաթվի հարաշարժում նվազման միտումի և համակարգային կոռուպցիայի մակարդակից ցածր վիճակում հայտնվելու ցուցանիշներում:

Նույն կերպ ոչ ՀՀ 2025-2027 թթ. ՄԺԾԾ-ում, ոչ ՀՀ 2023-2026 թթ. Հակակոռուպցիոն 5-րդ ռազմավարության, հետևաբար՝ նաև ոչ էլ 2024թ. պետական բյուջեում համապատասխան միջոցներ չեն հատկացվել Ոլորտի մարմիններին:

Ոլորտում 2024թ. խիստ սահմանափակ են օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային և

դրամաշնորհային ծրագրերի և միջոցառումների թիվը, մինչդեռ Ոլորտի մարմինները այդպիսի աջակցության լուրջ կարիք ունեն՝ ապահովելու համապատասխան ոլորտային բարեփոխումների գործող ռազմավարություններով և ՀՀ կողմից կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորություններով և հանձնառություններով նախատեսված նպատակների ու արդյունքային ցուցանիշների կատարումը: Հատկապես դա վերաբերում է հակակոռուպցիոն պայքարի ֆինանսավորմանը, քանզի 2023-2026թթ. 5-րդ հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսվել էին բազմամիլիոն ԱՄՆ դոլարային ծրագրեր:

Ոլորտին բյուջետային միջոցների հատկացման 2024թ. իրողությունը հետևանք է վերջին 5 տարիներին ձևավորված քաղաքականությանը և գործելակերպին: Այսպես, եթե 2021-2023թթ. ընթացքում ոլորտին բյուջետային հատկացումների աճի տեմպերը շատ բարձր էին՝ 2023թ. հասնելով տարեկան 125.3%-ի, ապա հաջորդ տարիներին սկսեցին այդ տեմպերը էականորեն մարել: 2024թ. հաստատված պլանով նախատեսված էր 104.2%-ի աճ, մինչդեռ փաստորեն այդ ցուցանիշը կազմեց ընդամենը 103.4%, այսինքն նախատեսված ծրագիրը կատարվեց սոսկ 99.2%-ով: Մխիթարող չէ նաև 2025թ. ծրագրված հատկացումների ծավալը:

Դրա արդյունքում Ոլորտին հատկացված բյուջետային միջոցների տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքի (այսուհետ՝ ՀՆԱ) մեջ կազմել է 0.74 տոկոս, ինչը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 0.03 տոկոսային կետով: Ընդ որում, այդ ցուցանիշը 0.025 տոկոսային կետով գերազանցում է 2020-2023թթ-ի միջին 0.715 տոկոս ցուցանիշը:

Նախորդ տարվա համեմատ, Ոլորտին հատկացված ծրագրերին ուղղված բյուջետային միջոցները ՀՀ 2024 թ. պետական բյուջեի (այսուհետ՝ ՊԲ) ծախսերի մեջ նվազել են 0.31 տոկոսային կետով և կազմում են ՊԲ ծախսերի 2.53 տոկոսը՝ 2020-2023թթ-ի միջին 2.55 տոկոսի պարագայում: Այսինքն, ՊԲ 2024 թ. ծախսերի մեջ Ոլորտին հատկացված բյուջետային միջոցների տեսակարար կշիռը նվազել է 0.02 տոկոսով:

2024 թ. Ոլորտին հատկացված բյուջետային միջոցները ՀՀ մշտական բնակչության մեկ շնչի հաշվով կազմել են 24,664.6 դրամ՝ 2023 թ. 24,414.5 դրամի դիմաց, 250.1 դրամով կամ 1.0 տոկոսային կետով ավելի: Այդ ցուցանիշը 5,839.4 դրամով կամ 31.0 տոկոսային կետով գերազանցում է նույն ցուցանիշի 2020-2023 թթ. միջին մակարդակը՝ 18,825.2 դրամ:

Հուսադրող չէ Ոլորտի կապիտալ ծախսերի բյուջետային ֆինանսավորման վիճակը. Դա շարունակաբար կազմում է Ոլորտի ֆինանսավորման սոսկ 2.5-2.8

տոկոսը, ինչը բավարար չէ ոլորտային ԲԳԿ-ների կարողությունների հզորացման համար:

Միաժամանակ խիստ անբավարար միջոցներ են հատկացվում հակակոռուպցիոն պայքարին: Ընդ որում, հատկացված սուղ միջոցները անհամաչափ են բաշխվում այդ պայքարի ուղղությունների միջև:

Վերոհիշյալի հետ մեկտեղ օրակարգային է մնում հակակոռուպցիոն միասնական ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման հիմնախնդիրը: Ներկայում երկրում հակակոռուպցիոն պայքարը կառավարվում է ապակենտրոնացված համակարգի միջոցով: Այդ պարագայում կոռուպցիայի դեմ պայքարելու լիազորություններ ունեն մի շարք մարմիններ, բայց դրա հետ մեկտեղ չունենք ունեցել գեթ մեկ մարմին, որը պատասխանատվություն է կրել գրանցած բացթողումների, այդ թվում՝ բացասական, արդյունքների համար:

Ոլորտում լուրջ հիմնախնդիրներ կան ծրագրային բյուջետավորման զարգացման հարցերում:

Այսպես բյուջետային հայտերի ռազմավարական մասերում հիմնականում չեն ներկայացվում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններն ու հանձնառությունները: Դրանցում անհստակ են ներկայացված ծրագրերի նպատակներն ու վերջնական արդյունքի կատարողակն ցուցանիշները: Միաժամանակ, չկան **վստահելի տեղեկատվության աղբյուրներ ծրագրերի վերջնական շահառուներից** (ՀՀ քաղաքացիներ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ))՝ մշակված վերջնական արդյունքի և ոչ ֆինանսական, կատարողական ցուցանիշների վերաբերյալ արժանահավատ և ամբողջական տեղեկատվություն հավաքագրելու համար: Այդ տեղեկատվությունը լրացվում է հենց իրենց՝ բյուջետային ծրագրեր մշակողների և իրականացնողների կողմից, ինչը թույլ չի տալիս համոզվել դրանց արժանահավատության մեջ Ավելին, այդ գործում անբավարար է ՊԿ և ՍԱԻ մարմինների կառուցողական համագործակցությունը ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների հետ, որոնք ունեն բավարար ներուժ օգնելու վերոհիշյալ մարմիններին:

Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ Ոլորտի մարմինների աշխատակիցներն ունեն որոշակի դժվարություններ բյուջետային ծրագրերի վերջնական արդյունքի, ոչ ֆինանսական ցուցանիշների մշակման, դրանց կատարման մասին հուսալի, ամբողջական ու արժանահավատ տեղեկատվություն հավաքագրելու գործում:

Ելնելով վերոհիշյալից առաջարկում ենք.

1. Ձեռնամուխ լինել երկրի ռազմավարական ծրագրավորման աշխատանքների ակտիվացմանը,

2. Դրանք համապատասխանեցնել ՀՀ կողմից ստորագրած միջազգային պայմանագրերով ստանձնած հանձնառություններին և միջազգային կառույցների կողմից ընդունված փաստաթղթերում սահմանված նպատակներին ու պարտավորություններին,

3. Հետևողականորեն իրականացնել 2023թ. բաց բյուջեի հետազոտության զեկույցում ՀՀ-ին ներկայացված առաջարկությունների կենսագործումը բյուջետային գործընթացի ժամանակ՝ շեշտը դնելով բյուջեների մասնակցային մոնիթորինգի աշխատանքի զարգացմանն ու հզորացմանը,

4. Ակտիվ աշխատանքներ կատարել օտարերկրյա ներդրումների ներգրավվման ու դրամաշնորհների հայթայթման ուղղությամբ,

5. Ձեռնամուխ լինել կենտրոնացված հակակոռուպցիոն համակարգի ձևավորման աշխատանքներին: Այդ գործում օգտագործել հակակոռուպցիոն Կոալիցիայի և ԻՀԱ կողմից ներկայացված [տեղեկանք](#), որում ներկայացված են կենտրոնացված հակակոռուպցիոն համակարգի առավելությունները, ապակենտրոնացված համակարգի թերությունները և համընդհանուր չափանիշներ, որոնք պետք է ունենա հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը՝ անկախ մոդելի ընտրության տեսակից,

6. օպտիմալացնել Արդարադատության ոլորտի ֆինանսավորման բաշխվածությունը, ուշադրությունը բևեռելով հակակոռուպցիոն պայքարի կանխարգելման և կրթության ոլորտների ֆինանսավորման մեծացմանը,

7. Հանձնարարել ԲԳԿ-ներին իրենց կողմից ներկայացվող բյուջետային հայտերում.

- Ներկայացնել ՀՀ կառավարության գործունեության ծրագրի և գործող ոլորտային ռազմավարական ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցառումների ամբողջական իրականացման համար հիմնավորված ծախսային առաջարկություններ,
- ԿԶՆ նպատակների, միջազգային կազմակերպությունների նորմատիվ իրավական փաստաթղթերի և կնքված պայմանագրերի

- նպատակադրումների ու հանձնառությունների կատարման նպատակով նախաձեռնել ֆինանսավորման ապահովման ակտիվ աշխատանք,
- բոլոր բյուջետային ծրագրերի նպատակներն ու վերջնական արդյունքային ցուցանիշները ուղղակիորեն բխեցնել վերոհիշյալ ռազմավարական ծրագրերի, փաստաթղթերի, պայմանագրերի նպատակադրումների և հանձնառությունների հետ,
 - բոլոր բյուջետային ծրագրերի քաղաքականության միջոցառումների համար մշակել վերոհիշյալ ռազմավարական ծրագրերի, փաստաթղթերի, պայմանագրերի նպատակադրումների և հանձնառությունների կատարմանն ուղղված **ոչ ֆինանսական (կատարողական) ցուցանիշներ**,
 - բոլոր քաղաքականության միջոցառումների համար մշակել **հստակ ու չափելի ֆինանսական (կատարողական) ցուցանիշներ**,
 - այդ նպատակով իրականացնել ՊԿ, ՍԱԻ մարմինների և ՔՀԿ-ների, ՋԼՄ-ների ներկայացուցիչների մասնագիտական որակավորման բարձրացման **ուղղությամբ շարունակական ուսումնական ծրագրեր**,
 - մշակել և իրականացնել հստակ ծրագրեր **հակակոռուպցիոն բյուջետային ծրագրերի վերջնական արդյունքի, ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ առավել ամբողջական, արդյունավետ, հուսալի, արժանահավատ, օգտակար ու չափելի տեղեկատվություն հավաքագրելու ուղղությամբ**,
 - մշակել և իրականացնել հստակ համագործակցության ծրագրեր **արհեստավարժ ՔՀԿ-ների, դրանց ցանցերի, ՋԼՄ-ների հետ՝ բյուջետային ծրագրերի կատարման մշտական մոնիթորինգ իրականացնելու ուղղությամբ**,
 - և այլն:

This study has been developed with the financial support of the European Union, within the framework of a sub-grant provided under the "Budgets for Citizens" project implemented by a consortium led by the "Armenian Lawyers' Association" NGO.

It has been implemented by "Centre of Economic Right" NGO within the framework of the "Implementation of Justic Sector Budget Monitoring and Analysis" project.

The "Centre of Economic Right" NGO is responsible for the content, and it does not necessarily reflect the views of the European Union.